ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարսի համայնք, 19-րդ փողոց, թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2017 թվականի N 25-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով՝ համայնքի ավագանին որոշում է հաստատել համայնքի ավագանու N 8 արտահերթ նիստի օրակարգը.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու մասին.

2.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը մրցութային կարգով, վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.

3.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին

4.Ալափարսի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

5.Ալափարսի համայնքի 2017 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից հատկացումներ կատարելու մասին:

Կողմ(5) **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՆԱՐԵԿ ԲԱԲԱՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ
ՎԱՀԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարսի համայնք, 19-րդ փողոց, թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2017 թվականի N 26-Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող 6.60367 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

2.Աճուրդ-վաճառքի միջոցով օտարվող հողամասերի մեկնարկային գները հաշվարկել հողամասերի կադաստրային գների 51 տոկոսի չափով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ(5) **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵԱՐԵԿ ԲԱԲԱՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ

ՎԱՀԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Հավելված
Ալափարսի համայնքի ավագանու
2017 թվականի սեպտեմբերի 27-ի
N 26-Ն որոշման

ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ

Լոտ	Անվանումը	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը (հեկտար)	Նպատակային նշանակությունը	Հողատեսքը	Գործառնական նշանակությունը	Մեկնարկային գինը (հազ.դրամ)	Սահմանափակումները
1	Ջրովի վարելահող	«Դալիկ-Դաշտ» հանդամաս	07-008-0201-0190	2,00046	Գյուղա-տնտե-սական	2-րդ կարգի ջրովի վարելահող	Ջրովի վարելահող	2254,7	չկան
2	Ջրովի վարելահող	«Դալիկ-Դաշտ» հանդամաս	07-008-0201-0191	1,50396	Գյուղա-տնտե-սական	2-րդ կարգի ջրովի վարելահող	Ջրովի վարելահող	1695,1	չկան
3	Ջրովի վարելահող	«Դալիկ-Դաշտ» հանդամաս	07-008-0201-0148	3.09925	Գյուղա-տնտե-սական	2-րդ կարգի ջրովի վարելահող	Ջրովի վարելահող	3493.2	չկան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարսի համայնք, 19-րդ փողոց, թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2017 թվականի N 27-Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը տրամադրել մրցութային կարգով, վարձակալության իրավունքով՝

1)0.087125 հեկտար արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամաս, կադաստրային ծածկագիր՝ 07-008-0026-0033, հասցեն՝ գյուղ Ալափարս, 22-րդ փողոց, N 44, արտադրական գործունեություն ծավալելու նպատակով, 20 տարի ժամկետով, մակնարկային վարձավճարը հաստատել հողամասի կադաստրային գնի 1 տոկոսի չափով՝ 25 615 դրամ.

2)0.58303 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի հողամաս, կադաստրային ծածկագիր՝ 07-008-0210-0039, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, 15 տարի ժամկետով, մակնարկային վարձավճարը հաստատել հողամասի կադաստրային զուտ եկամուտի 20 տոկոսի չափով՝ 10 308 դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ(5) **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՆԱՐԵԿ ԲԱԲԱՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ
ՎԱՀԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարսի համայնք, 19-րդ փողոց, թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2017 թվականի N 28-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 3-րդ մասի դրույթներով, ընդառաջելով քաղաքացի Տիգրան Ղազարյանի դիմումին, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող 0.53155 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության, 07-008-0232-0037 կադաստրային ծածկագրով արոտավայրը ուղղակի վաճառքի միջոցով օտարել սահմանակից հողամասի սեփականատեր Տիգրան Ղազարյանին՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով:

2.Ողղակի վաճառքի միջոցով օտարվող հողամասի գինը հաստատել հողամասի կադաստրային գնի չափով՝ 126 243 դրամ:

Կողմ(5) **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՆԱՐԵԿ ԲԱԲԱՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ
ՎԱՀԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարսի համայնք, 19-րդ փողոց, թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2017 թվականի N 29-Ն

ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է Ալափարսի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Ալափարսի համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 47-Ն որոշման(այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.որոշման 1-ին կետում և 1-ին կետի 1-ին ենթակետում «58930,8» թիվը փոխարինել «103213.5» թվով.

2.որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «63213,5» թիվը փոխարինել «103213.5» թվով.

3.որոշման 1-ին կետի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ(5) **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՆԱՐԵԿ ԲԱԲԱՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ
ՎԱՀԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարսի համայնք, 19-րդ փողոց, թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2017 թվականի N 30-Ն

ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, «Ալափարսի մշակույթի տուն» և «Ալափարս գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին ֆինանսավորելու նպատակով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Ալափարսի համայնքի 2017 թվականի բյուջեի (այսուհետ՝ բյուջե) պահուստային ֆոնդից կատարել հատկացումներ՝

1)բյուջեի 08-2-3 «Մշակույթի տներ» գործառական դասակարգման 4511 «Սուբսիդիաներ» սինթետիկ հաշվին՝ 1 050 000 դրամ.

2)բյուջեի 09-1-1 «Նախադպրոցական կրթություն» գործառական դասակարգման 4511 «Սուբսիդիաներ» սինթետիկ հաշվին՝ 3 300 000 դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ(5) **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԵԿ ԲԱԲԱՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ

ՎԱՀԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ